Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԵՐԵՎԱՆԸ

Բակում, ծառերի կատարներից, հարևան տան պատերի վրայից, դիմացի շենքերից, ասֆալտե փողոցի մակերեսից, մոխրակապույտ երկնքից հետզհետե արդեն պարզ նայում է նոր բացվող օրվա տարտամ լույսը:

Մի երկու ժամ հազիվ աչքը կպցրած նիրհող Երևանը զարթնում է:

Արդեն փողոցում երբեմն վզզում է սրընթաց ավտոն, որը դեռ չի կարողանում խլացնել զարթնած ճնճղուկների ճկճկոցները ծառերի սաղարթի մեջ:

Մոտից, հեռուներից երբեմն մի թխկոց է պայթում, մերթ ինչ-որ մի հեռավոր աղմուկ է զարթնում ու սկսում քրթմնջալ: Շուտով ձայները շատանում են, լցվում, խառնվում, կոտրում իրար, բարակ-բարակ ձայներ, որ սկսում են ուժեղանալ:

Օրը վեր է գալիս:

Աբովյանի վերևը սկսվում է մի աղմկալի, անկանոն ոտնատրոփ, կարծես զորամաս է ազատաքայլ բարձրանում դեպի վեր: Դա ուսանողությունն է: Նա գնում է լցնելու Պետական համալսարանը, Բժշկական ինստիտուտը, հիվանդանոցներն ու Հանրային գրադարանը, Պոլիտեխնիկումը, Գյուղատնտեսական ինստիտուտը: Հակառակ մի շարժումով Ստալինյանն[1] ու Աբովյանն ի վայր, տրամվայներով ու ավտոմեքենաներով, հավաքվելով այլ մերձավոր փողոցներից, ահագին բազմություն է իջնում, որ գնալով միանում է այլ փողոցների նույնանման բազմության, և բոլորը միասին շտապում են դեպի հարավ՝ գործարանների սիստեմը:

Արդեն վաղուց խլացել են քաղաքի բարակ ու զիլ ձայները, հիմա նա անցնում է միջակ ձայնական ռեգիստրի: Շուտով ձայներն ուժեղանում են, բազմանում, խտանում, և ողջ քաղաքին տիրում է թանձրաձայն թավ բասը՝ ա՛-ա-ա՛:

Մեծ քաղաքի բնորոշ ձայնը:

Եվ այդ ձայնը տևում է ողջ օրը: Դա հազարավոր ավտոմեքենաների, տրամվայների, երկաթուղու գնացքների, հեռավոր գործարանների անորոշ, խուլ մռլտոցն է: Մռլտոց, որ հոսում է լայն պողոտաներով, գալիս լցվում է փողոցները, տները, և քաղաքն սկսում է ապրել իր մեծ օրը՝ աշխատանքի, ջանքի, ստեղծագործության:

Երկնակապույտը, Նորքի բլուրը կանչում են վեր:

Եվ ահա, երբ Նորքի լանջերից ես նայում ներքև՝ ողջ քաղաքն է արդեն բացվում առջևդ, իր ձայնով ու կերպարանքով:

Քաղաքը դղրդում է, որոտում իր ներքին ուժերից ու եռանդից: Հզոր մագիստրալները նետվում են դեպի արևմուտք և հարավ: Ոչ կանոնավոր անսամբլները իրար հաջորդելով ու կտրելով՝ կազմավորում են նրա մարմինը: Առայժմ տիրական է նրա կենտրոնը, բուն քաղաքը, որ բլուրներով եզերված՝ իբրև ամֆիթատրոն, բացվում է դեպի Արարատյան դաշտն ու Մասիսները: Գործարանային մի մեծ ծուխ փակելով երբեմն Մասիսները՝ մլլվում է դեպի երկինք, դինամիկ դարձնելով քաղաքի տեսքը: Մեծ կենդանություն է այնտեղ՝ գործարանային թաղամասերում: Հազարավոր մեքենաներ, դինամոներ, դազգահներ, մուրճեր ու հնոցներ աղմկում են այնտեղ և քաղաքին հաղորդում գործարանային արդյունաբերության առույգ ոգին: Թամանյանի այգի— քաղաքը ենթարկված է այդ թելադրանքին և ընդունել է այլ ընթացք:

Երբ քաղաքամերձ բարձունքից նայում ես քաղաքին, զգում ես, որ նա շարժվում է, դուրս է միտում իր ափերից: «Թամանյանի քաղաքը», որ նրա ժամանակ միտում էր միայն դեպի բլուրները, այսօր

բոլորովին այլ թափով ընդարձակվել է այդ բլուրների վրա, ճարակում է Արարատյան դաշտի մերձակա մասերը, տնակների նախահարձակ բազմությունները տիրել են Սարի թաղին, Նորքի բարձունքներին, Քանաքեռի ստորոտներին: Արաբկիր, Կոզեռ այժմմիացել են նրան: Քաղաքը, որ Զանգվից այն կողմ հազիվ էր ոտք դրել, այժմ վճռականորեն գնում է դեպի Էջմիածին, Շահումյան: Այո, քաղաքը աչքիդ առջև շարժվում է… Նրան նեղում են իր սահմանները, իր բնակչությունը, ստեղծագործական կարողությունները, արդյունաբերության ծավալն ու թափը: Նա մեծ քաղաքի քայլեր է գցում: Հաղթանակի կամուրջը քիչ է նրա համար: Նա պահանջում է ավելի մեծը և կստանա այն: Այդ նորը կմիացնի քաղաքը Շահումյանի շրջանին: Շուտով Զանգուն կդառնա քաղաքամիջյան գետ, և քաղաքը շքեղորեն կբազմի բլուրների և հովիտների վրա, և նրան երևի մեր բանաստեղծներն իրենց երգերում՝ կկոչեն բազմաբլրյան Երևան:

***

Երեք դար թուրք-պարսկական պատերազմների վրա դառավ Երևանը: 1582-ին Զանգվի ափին կառուցվեց Երևանի բերդը: Ձորափին նայող պալատի պատշգամբից սարդարը գոռոզադեմ դիտում էր իր տիրակալությունը՝ Արարատյան դաշտը, Մասիսները, ներքև՝ Զանգվի կամուրջից անցնող հարկատու ժողովուրդը, ստրուկ, անպաշտպան…

Տասներեք անգամ Երևանն անցավ տաճիկների ու պարսիկների ձեռքը: Մոտ երեք դար թուրք-պարսկական պատերազմը ճարակում էր այս քաղաքը:

1673-ին էլ վրա հասավ բնության աղետը՝ երկրաշարժը և հիմնովին կործանեց այն:

Կարելի է պատկերացնել, թե ինչ էին ներկայացնում այս տարբեր ժամանակների երևանները… Անտաշ քարեր, կավ, փողոցներում կանգնած կանաչ ջրեր…

Սարդարների ժամանակ քաղաքը դարձավ առևտրական ճանապարհի քաղաք: «Ծածկած շուկա», որի միջով անցնում էր մի բազմություն՝ ջորիների ու էշերի հետ: Քարվանսարաներ, բաղնիքներ, մեչիդներ, Գեոյ մեչիդը, Շահար մեչիդը, եկեղեցիներ՝ Պողոս-Պետրոս, Կաթուղիկե, Ձորավոր, սուրբ Սարգիս, պալատ-տներ՝ Փանահ խանի, Ուլի խանի:

1827—28-ին եկավ ռուսական տիրապետությունը: Քաղաքը շարժվել սկսեց. անշուշտ շատ բան փոխվեց նախկին ասիական քաղաքում, փոխվեցին զարգացման հնարավորությունները: Ցարական կառավարությունը քաղաքը դարձրեց նահանգի կենտրոն: Քաղաքը հյուսիսից մոտեցավ Նորքին, կառուցվեցին Շուստովի կոնյակի, գինու գործարանը, մի քանի գաճաճ կաշեգործարաններ, խառատ-մեխանիկական և ներկի արհեստանոցներ, հրապարակում մռայլ բարձրացավ զինվորական տաճարը՝ ճնշելով իր շրջակայքի մթնոլորտը[3]: Առաջացան «եվրոպական» տիպի տներ՝ նահանգական վարչության, նահանգապետի, մի քանի հայ հարուստների: Երևաց… ձիաքարշը: Մագազիններ: Անգամ պլանավորվեցին փողոցները՝ Ցարսկայա[4], Բեբութովսկայա[5], Աստաֆևսկայա (Աբովյան):

Երևանը ցարական կառավարության ամենից շատ աչքից ընկած նահանգական քաղաքն էր: Նրա զարգացման ոչ միայն հոգը չկար, այլև ձեռնտու չէր մի որևէ «հայկական» կենտրոնի ուժեղացումը՝ մանավանդ արդյունաբերական տնտեսական կողմից: Եվ ցարական «շինարարությունը», որ դանդաղ սկսվել էր՝ վերջիվերջո ճապաղեց և մնաց այդ վիճակում:

Դաշնակցության տխրահռչակ տիրապետությունը ոչինչ չտվեց Երևանին, բացի քարուքանդությունը, վատթարացումը: Ընդհարումների ժամանակ գլխովին ավերված Դամուրբուլաղն ու այլ մասերը ավելի ավերվեցին:

11,463 բնակիչ ուներ Երևանը, երբ ռուսները գրավեցին քաղաքը և մոտ 30,000, երբ նա անցավ սովետական իշխանության: Իննսուն տարվա ցարական իշխանությունն այսքան կարողացավ ծավալել քաղաքը:

Բայց փակենք պատմության վարագույրը: Տեսարանը տխուր է, ողորմելի, քամահրող: Նայենք կրկին մեր ներկա Երևանին:

Մեծատաղանդ Թամանյանը հիմք դրեց նոր քաղաքի՝ համաձայն 20-ական թվերի մեր պետության առաջադրանքին: Նա ձեռնարկեց այն ժամանակվա համար ամենահամարձակն ու ամենաառաջնականը: Հետագայում որքան էլ փոփոխության ենթարկվեր հիմնական պլանը՝ նա աչքի առաջ ուներ… 150,000 բնակչության սահմանային թիվը:

Ո՞ւր է մնացել այդ թիվը և քաղաքի այն ժամանակվա ծավալը: Երեսուն տարվա Երևանի ականատեսներն այսօր ժպտում են այդ թվի վրա:

Քաղաքը շարժվում է, ուղղակի տեսնում ես այդ շարժումը:

Եվ զարմանալի է: Ինչպես երևակայության խաղով տարված Թամանյանը ժամանակի Երևանից նայում էր հին երևաններին և ժպտում ու խորհում նրանց հնության վրա, այսօր հիշելով 20-ական թվերի Երևանը… նույնպես ժպտում ես: Ո՞վ մեզանից չի հիշում Աբովյան փողոցը իբրև զբոսավայր՝ ոչ միայն մայթերով, այլև… փողոցի մեջտեղով: Ալավերդյան փողոցի վրա կանգնած միլիցիոները արգելում էր սայլերի, կառքերի մուտքը այդ փողոցներից ներքև: Հասարակությունը՝ ճաշից հետո, երեկոյան լցվում էր փողոցը և երկար շարաններով զբոսնում այնտեղ, ուր այժմ անցորդը պետք է որսա վայրկյանն արագ անցնելու մայթից մայթ՝ մեքենայի տակ ընկնելու վտանգից մղված: Շրջանային փողոցի վերին մասում, Բժշկական ինստիտուտից մինչև Պետհրատի շենքը, այնպիսի ցեխ էր լինում, որ մութ ժամանակ դիմացից եկողին հարցնում էիր «անցքերը»…

Մենք մեզանից անցանք, մենք շարունակ վերապլանավորում ենք սոցիալիստական քաղաքի արագաշարժությունից:

***

Եվ շարունակ երազանք… Որտեղի՜ց եկավ նա, այս Երևանը… Մտքով թռչում ես ետ՝ դարեր և խորհում ես մարդկային զարգացման ստորին, միամիտ, պարզունակ աստիճանների մասին, նրա թափած ճիգերի, ուժերի վատնման և խղճուկ նվաճումների մասին: Ժպտում ես ուրարտական արքաների և իրանական սարդարների գոռոզության հպարտանքի վրա, ցարական իշխանության նորմուծությունների վրա:

Ժպտում ես նաև մեր մոտիկ անցյալի վրա: Դեռ որքա՜ն պիտի գեղեցկանա, վեհանա, որքա՜ն հպարտանքով պիտի նայի շուրջը, և ի՞նչ սերունդներ պիտի տեսնեն նրան շքեղաշուք ապագայում:

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԵՐԵՎԱՆԸ

(Էջ 190)

Առաջին անգամ տպագրվել է «Սովետական գրականություն և արվեստ, 1949, № 7, այնուհետև՝ «Անի», Բեյրութ, 1949, №№ 8—9: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է «Սովետական գրականություն և արվեստ» հանդեսից: Նույն հանդեսի արխիվում պահվում է ակնարկի մեքենագիր օրինակը՝ (ԳԱԹ, Սովետ. գրակ. և արվեստի արխիվ, № 111): Այստեղ կա երկու հատված, որոնք դուրս են մնացել հրատարակությունից: Բերում ենք ստորև, ծանոթագրություններից անմիջապես հետո, բնագրի վրա աստղանիշերով նշելով դրանց տեղերը:

1 Այժմյան Լենինի պողոտան:

2 Թամանյանի քաղաքը— նկատի ունի հայ անվանի ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի (1878—1936) Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը, որն ստեղծեց 1924 թ.:

3 Նկատի ունի ռուսական եկեղեցին, որ կանգնած էր այժմյան Շահումյանի անվան հրապարակի տեղում:

4 Այժմ՝ Ս. Սպանդարյան փողոց:

5 Այժմ՝ Յա. Սվերդլով փողոց: